ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.10.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/139

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.09.2018թ. թիվ 01.1/26-3/16524-18 գրությամբ «Լայվ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Վանաձորի համայնքապետարանի 07.09.2018թ. թիվ 061/8344 և 11.09.2018թ. թիվ 061/8414 գրությունների հիման վրա, 13.09.2018թ. թիվ 01.1/26-3/16524-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Լայվ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Լայվ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Լայվ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/139 ընթացակարգի շրջանակներում 17.09.2018թ. ժամը 11:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է, որ պատվիրատուն նախքան 20.12.2017թ. թիվ «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԾՁԲ-18/03» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելը Ընկերությանը չի տեղեկացրել պայմանագրային պարտավորությունների խախտման մասին, որպիսի պարագայում պատվիրատուն իրավունք չուներ միակողմանի լուծել վերոնշյալ պայմանագիրը:

3. <u>Վանաձորի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Վանաձորի համայնքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 07.09.2018թ. թիվ 061/8344 և 11.09.2018թ. թիվ 061/8414 գրություններով հայտնել է, որ Վանաձորի համայնքապետարանի և «Լայվ» ՍՊԸ-ի միջև կնքված «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԾՁԲ-18/03» ծածկագրով պայմանագիրը խզվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/139 ընթացակարգի շրջանակներում 17.09.2018թ. ժամը 11:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ՍՑ-ԱՄ-2018/139 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ԱՄ-2018/139 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.Վանաձորի համայնքապետարանի և «Լայվ» ՍՊԸ-ի միջև 20.12.2017թ. կնքվել է աղբահանության և փողոցների սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման թիվ «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-18/03» ծածկագրով պայմանագիրը, որի հավելված 1

տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 01.01.2018թ.-31.12.2018թ. ընկած ժամանակահատվածում Պատվիրատուին մատուցել Վանաձոր համայնքի 1-ին գոտու կենցաղային աղբահանության և փողոցների սանիտարական մաքրման ծառայություններ:

2. Ընկերությանն ուղղված 03.07.2018թ. թիվ 079/6443 գրությամբ Վանաձորի համայնքապետարանը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետը, միակողմանի լուծում է Պայմանագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.09.2018թ. թիվ 01.1/26-3/16524-18 գրությունը, Վանաձորի համայնքապետարանի 07.09.2018թ. թիվ 061/8344 և 11.09.2018թ. թիվ 061/8414 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 405-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Վանաձորի համայնքապետարանի և «Լայվ» ՍՊԸ-ի միջև 20.12.2017թ. կնքվել է աղբահանության և փողոցների սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման թիվ «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-18/03» ծածկագրով պայմանագիր:

Պայմանագրի 1-ին կետի 1.1-րդ ենթակետի համաձայն՝ «Լայվ» ՍՊԸ-ն ստանձնել է Վանաձոր համայնքի 1-ին գոտու կենցաղային աղբահանության և փողոցների սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման պարտավորությունը՝ համաձայն Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Նույն կետի 1.2-րդ ենթակետով նախատեսվել է, որ ծառայությունը մատուցվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի համաձայն՝ ծառայությունները նախատեսվել է մատուցել 01.01.2018թ.-31.12.2018թ. ընկած ժամանակահատվածում:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության, բարեկարգման և շրջակա միջավայրի պահպանության բաժնի համապատասխան աշխատակիցների կողմից 19.03.2018թ. կազմված և ստորագրված արձանագրության համաձայն՝ հերթական շրջայցի ժամանակ արձանագրվել է, որ 1-ին գոտու կողմից սպասարկվող տարածքներում աղբահանության և սանմաքրման աշխատանքները թերի են կատարվում, ընդ որում համապատասխան փողոցներում սանմաքրում չի իրականացվում:

Համաձայն արձանագրության վրա առկա նշման՝ արձանագրությունը «Լայվ» ՍՊԸ-ին առձեռն տրամադրվել է ***22.03.2018թ.:***

Համաձայն Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության, բարեկարգման և շրջակա միջավայրի պահպանության բաժնի մասնագետների կողմից 23.05.2018թ. կազմված և ստորագրված արձանագրության՝ Վանաձոր համայնքում հերթական շրջայցի ժամանակ արձանագրվել է, որ Պայմանագրով նախատեսված աղբահանության և սանմաքրման աշխատանքները թերի են կատարվում, իսկ մի շարք փողոցներում սանմաքրման աշխատանքներ չեն իրականացվում:

Արձանագրում եմ, որ գործում առկա չէ վերոհիշյալ արձանագրությունը «Լայվ» ՍՊԸ-ին տրամադրելու վերաբերյալ որևէ փաստաթուղթ:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության, բարեկարգման և շրջակա միջավայրի պահպանության բաժնի համապատասխան աշխատակիցների կողմից 27.06.2018թ. կազմված և ստորագրված արձանագրության համաձայն՝ վերոհիշյալ աշխատակիցները շրջայցի ժամանակ արձանագրել են, որ Վանաձոր համայնքի 1-ին գոտու տարածքում կենցաղային աղբահանության և սանմաքրման աշխատանքները կատարվում են ոչ պատշաճ, կան բազմաթիվ կուտակումներ աղբարկղերի տարածքներում, բոլոր աղբամուղները լցված են, ինչպես նաև չեն իրականացվում շրջիկ աղբահանության երթերը:

Արձանագրում եմ, որ գործում առկա չէ վերոհիշյալ արձանագրությունը «Լայվ» ՍՊԸ-ին տրամադրելու վերաբերյալ որևէ փաստաթուղթ:

Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության, բարեկարգման և շրջակա միջավայրի պահպանության բաժնի աշխատակիցների կողմից 02.07.2018թ. կազմված և ստորագրված արձանագրության համաձայն՝ վերջիններիս կողմից 27.06.2018-02.07.2018թթ. իրականացված ամենօրյա շրջայցերի և ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է, որ 1-ին գոտու տարածքում աղբահանության վիճակը շարունակում է մնալ անփոփոխ, ծայրահեղ վատ վիճակում, կան բազմաթիվ կուտակումներ աղբարկղերի տարածքներում, բոլոր աղբամուղները լցված են, ինչպես նաև չեն իրականացվում շրջիկ աղբահանության երթերը:

Համաձայն արձանագրության վրա առկա նշման՝ արձանագրությունը «Լայվ» ՍՊԸ-ին առձեռն տրամադրվել է ***03.07.2018թ.:***

Վանաձորի համայնքապետարանը 02.07.2018թ. թիվ 079/6389 գրությամբ դիմել է Ընկերությանը՝ վկայակոչելով Պայմանագրի 2.4.1 կետը, որի համաձայն կատարողը պարտավոր է Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով օրենսդրությամբ, ինչպես նաև Պայմանագրի 5.2-րդ կետը՝ որի համաձայն Պայմանագրի թիվ 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5 տոկոսի չափով:

Պատվիրատուն վկայակոչել է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածը, 369-րդ հոդվածի 1-ին մասը, Պայմանագրի 7-րդ կետի 7.10-րդ ենթակետը, որի համաձայն՝ Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Նույն գրության համաձայն՝ կից ներկայացվել է 28.06.2018թ. պատասխանատու ստորաբաժանման նիստի թիվ 60 արձանագրությունից քաղվածքը:

Վերոհիշյալ գրությունը համաձայն վերջինիս վրա առկա նշումի՝ Ընկերության կողմից առձեռն ստացվել է 03.07.2018թ.:

Միևնույն ժամանակ Ընկերությանն ուղղված ***03.07.2018թ. թիվ 079/6443*** գրությամբ Վանաձորի համայնքապետարանը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետը, միակողմանի լուծում է Պայմանագիրը, քանի որ Ընկերության կողմից Պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցվում են սահմանված ժամկետի էական խախտումներով, ինչն էլ խոչընդոտներ է ստեղծում Պայմանագրով նախատեսված գործողությունների պատշաճ կատարման համար:

Այսպես՝ Պայմանագրի 2-րդ կետի 2.1.3-րդ ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրն, եթե կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Գործում առկա նյութերի համաձայն, «Լայվ» ՍՊԸ-ի կողմից մատուցված աղբահանության և սանմաքրման ծառայությունների՝ Պայմանագրի թիվ 1 հավելված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին անհամապատասխան լինելու վերաբերյալ Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության, բարեկարգման և շրջակա միջավայրի պահպանության բաժնի համապատասխան աշխատակիցների կողմից կազմվել և ստորագրվել են արձանագրություններ, որոնցից 19.03.2018թ. և 02.07.2018թ. կազմված արձանագրություններն են հանձնվել Ընկերությանը, որից 02.07.2018թ. արձանագրությունը՝ ***<u>03.07.2018թ.:</u>*** Ընդ որում՝ 19.03.2018թ. արձանագրությունը կազմելուց հետո ծառայությունների մատուցումը Ընկերության կողմից շարունակվել է: Դրա հետ մեկտեղ Պատվիրատուն Ընկերությանն ուղղված ***<u>03.07.2018թ. թիվ 079/6443</u>*** գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետը, միակողմանի լուծում է Պայմանագիրը, քանի որ Ընկերության կողմից Պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցվում են սահմանված ժամկետի էական խախտումներով, ինչն էլ խոչընդոտներ է ստեղծում Պայմանագրով նախատեսված գործողությունների պատշաճ կատարման համար:

Պայմանագրի 3-րդ կետի 3.1 ենթակետը սահմանում է, որ մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Նույն կետի 3.3-րդ ենթակետի համաձայն՝ եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

Դրա հետ մեկտեղ Պայմանագրի 2-րդ կետի 2.1.2-րդ ենթակետի համաձայն՝ եթե մատուցվել է Պայմանագրի թիվ 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն, ապա Պատվիրատուն իրավունք ունի.

ա) չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել կատարողից վճարելու պայմանագրի 5.2-րդ կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) հրաժարվելու պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել կատարողից վճարելու պայմանագրի 5.2-րդ կետով նախատեսված տուգանքը:

Այսպիսով՝ Պայմանագրի 2-րդ կետի 2.1.2-րդ ենթակետը հստակ սահմանում է այն միջոցները, որոնք Պատվիրատուն կիրառում է, եթե մատուցվել է տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին անհամապատասխան ծառայություն: Դրա հետ մեկտեղ Պայմանագրի.2-րդ կետի 2.2.1 ենթակետը սահմանում է, որ Պատվիրատուն

պարտավոր է քննարկել և ընդունել տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել կատարողին: Արձանագրում եմ, որ Ընկերության կողմից մատուցված ծառայությունների՝ Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին անհամապատասխան լինելու վերաբերյալ Ընկերությանը ծանուցելու նույն օրը (մասնավորապես՝ 02.07.2018թ. արձանագրությունը Ընկերության կողմից ստացվել է 03.07.2018թ.)՝ Պատվիրատուն ***03.07.2018թ.*** լուծել է Պայմանագիրը՝ հայտնելով, որ Պայմանագրով նախատեսված ծառայությունները մատուցվում են սահմանված ժամկետի էական խախտումներով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «Լայվ» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրային պարտավորության խախտման փաստը, քանի որ Ընկերության կողմից մատուցված ծառայության թերությունների մասին վերջինիս ծանուցելուց անմիջապես հետո Պատվիրատուն լուծել է պայմանագիրը, այդ թվում նաև՝ հնարավորություն չընձեռնելով Ընկերությանն անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց ողջամիտ ժամկետում փոխարինելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Լայվ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.09.2018թ. թիվ 01.1/26-3/16524-18 գրությամբ «Լայվ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 06952855) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ